ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՕՏԱՐԱՋԳԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

L. Tillier.—Le mariage, sa genèse et son évolution. Paris.—(Ամուսնութիւնը, նրա ծնունդը և զարգացումը). Մի շատ լաւ գիրք է, որի մէջ համառօտում, համեմատում և դասակարգում են ամուսնութեան զարգացման վերաբերեալ բոլոր տեսութիւնները։ Հեղինակը իսկապէս շատ խոր թափանցել է բոլոր հարցերի մէջ և մեծ աջողութեամբ լուսաբանել շատ մութ կէտեր։ Մի ուրիշ արժանաւորութիւնն էլ այն է, որ հեղինակը խոյս է տուել գիտական տերմիններ գործ ածելուց, որով աւելի ևս մատչելի է դարձրել իւր աշխատութիւնը։ Պ. Տիլիէն բառիս բուն նշանակութեամբ գիտնական լինելով՝ ոչ միայն հերքել է շատ մոլորութիւններ, ցոյց տուել հակասութիւններ, այլ և իւր անձնական դիտողութիւններն է արել շատ հարցերի վերաբերութեամբ, որով իւր աշխատութիւնը ամենայն գովասանքի արժանի է կացուցել։

(La Revue Inter. de Sociologie).

—

„Marriage Customs in Many Lands“ by M-r Hutchinson.—(Հարսանեկան սովորութիւններ շատ երկրներում). Շատ հետաքրքիր գիրք է, թէև ոչ այլ ինչ է ներկայացնում, բայց եթէ զանազան նշանաւոր գիտնականների այս խընդրի վերաբերութեամբ արած հետազօտութիւնների հաւաքածու։ Հեղինակը շատ բարեխղճօրէն ուսումնասիրել է աղբիւրները, ուստի և նրա աշխատութիւնը լիակատար տեղեկութիւններ է պարունակում զանազան երկրների և ժողովուրդների վերաբերեալ։

(Daily News).

—

„La Danse à travers les âges“ par Gaston Vuiller (Hachette).—(Պարերը դարերի ընթացքում)։ Այս գրքի մէջ բերուած է պարերի էվոլիւցիան և նրանց զանազան ազգերի մէջ և զանազան ժամանակներում ունեցած նշանակութիւնը։

(Indépendance Belge).

—

Д-ръ Люборъ Нидерле.—Человѣчество въ доисторическія времена.—Доисторическая археологія Европы и въ частности славянскихъ земель. Пер. подъ ред. Д. Н. Анучина, съ 459-ю рисунками и картою. Спб. 1898.

Մի ստուար հատորի մէջ հեղինակը աշխատում է միացնել այն բոլոր հետազօտութիւնները, որ կատարուած են ամբողջ Եւրոպայի բոլոր մասերում, պատուաւոր տեղ տալով նաև Արևելեան Եւրոպային։

Ռուսերէն թարգմանութիւնը լրացրած է հեղինակի և խմբագրողի բազմաթիւ ծանօթութիւններով ու նկատողութիւններով։

Լեզուն պարզ է, դիրքմբռնելի և որոշ, իսկ բազմաթիւ նկարները աւելի ևս դիտելի են ներկայացնում նիւթը։

(Вѣстникъ Европы).

—

Н. Карѣевъ: Введеніе въ изученіе соціологіи. Спб. 1897. — *Ներածութիւն Սոցիոլոգիայի ուսումնասիրութեան)։ Շատ օգտակար է թէ որպէս սոցիոլոգիայի ներածութիւն և թէ որպէս այդ գիտութեան վերաբերեալ գրականութեան տեղեկացոյց։ Միայն հեղինակը համակրում է սոցիոլոգների սուբեկտիվական դպրոցին, իսկ մեր կարծիքով՝ սուբեկտիվիզմը լիովին օրինաւոր է միայն բարոյական-հասարակական պահանջների մէջ, իսկ հասարակական երևոյթների գիտական ուսումնասիրութեան մէջ նա բոլորովին տեղ չպիտի ունենայ։*

(Русская Мысль).